


ՍԵՐԻՆԵ ՄՈՎՍԵՍԻ ԱՎԱԳՅԱՆ

Սերինե Մովսեսի Սվազյանը (Սերինե) ծնվել է 1896 թ., Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Արճակ գյուղում, ուսուցչի ընտանիքում: Հայրը, Մովսես Զաքարյանը, որ Վարազի վանքի գլխավոր առաջին շրջանավարաններից էր, 1897թ. ահապահվում է Վան: Այսպես էլ մանկահասակ Սերինեն զրկվում է մորից, մի քանի տարի անց՝ նաև հորից ու հանձնվում Արճակ գյուղում ապրող քեռու խնամքին: Կրելով որրուհուն վիճակված դռնությունները և ունենալով Վանի Արարք թաղամասի գլխավոր ստացած երկրորդ դասարանի գիտելիքներ միայն, Սերինեն կարողանում է ոչ միայն պահպանել իր գրաճանաչությունը, այլև օգտվելով գյուղի արական դպրոցի գրագրանից, հետզհետե ընդլայնել իր մասհորիզոնը:

Սերինեն գրել սկսել է մանկությունից: Նրա առաջին ստեղծագործությունը, որ հայրենի բարրառով երգիծական մի պոեմ էր, Արճակում դասավանդող վանքի ուսուցիչների միջամտությամբ, 1910 թ. լույս է տեսնում Վանի «Վան-Տոսպ» լրագրում:

1915-ի տեղաշարժի մեծ աղետի օրերին Սերինեն ևս կրում է կոտորածների սարսափը և ջարդից մազապուրծ համագյուղացիների հետ փախչում Վան, ուր ինքնապաշտպանության մարտեր էին մղվում: Նույն թվականին էլ, Սերինեի համար անակնկալ, Բաքվի հայկական լրագրերից մեկում մի քանի թերթում «Արճակեցի» մականորությամբ լույս են տեսնում Բաքվում ընկվող քեռուն Վանից ուղարկած նրա նամակները: Դրանք մահվան սարսափ ապրած ականառանգ պաամություններ էին Արճակի եղբրական գեպքերի, ինչպես և նրա ընկերների Վան-Սյգեստան տաժանների փախուստի մասին:

1915թ. ամռանից Սերինեն հաստատվում է



Բաքվում: 1918-ին, երբ հեղափոխական Բաքուն ժամանակավորապես կտրվում է Սովետական Ռուսաստանից, Սերինեն իր ընտանիքով մեկնում է Սատրախան, որտեղից և 1920-ին տեղափոխվում է Երևան:

1920—30-ական թվականներին Սերինեն գործուն մտանկցություն է ցուցաբերում Հայաստանի գավառների հասարակական կյանքին. 1920—23 թթ. աշխատում է Դարաշիշակի (Մաղկաձոր), Քանաքեռի և ապա Շամարլուի (Արտաշատ) մանկատներում, որպես որրտնոցի կառավարիչ, 1928—29 թթ. աշխատում է Բայազետի գավառային կոմիտեի կինրաժնում՝ հայ գեղեկուհիների անգրագիտության վերացման ուղղությամբ:

1940 թ. «Հայաստանի աշխատավորուհի» (№ 12) և «Խորհրդային գրականություն» (№ 12) ամսագրերում լույս են ահանում առանձին հաս-վածներ Սերինեի «Հաղարան ըլրուլ» պոեմից՝ 1943-ին Սերինեն ընդունվում է Հայաստանի սովե-ական գրողների միության շաբաթը՝ 1944-ին Հայպետհրապար լույս է ընծայում «Հաղարան ըլ-րուլ» պոեմը, իսկ մի քանի ամիս անց՝ 1959թ., այն վերահրապարակվում է։

Առողջական վառ վիճակը խանգարել է Սերինեի ստեղծագործական ուժերի լիակատար դրսևորմանը և, այնուամենայնիվ, նա հանդես է եկել մամուլում («Ծղեղնյա սրինգ» լեզենդը, «Հա-յաստանի աշխատավորուհի», 1959, № 9, Բանա-տեղծություններ, «Գրական թերթ», 1946, № 19, 1947, № 16, պատմվածքներ, «Պիսներ» լամա-գիր, 1954, № 4 և այլն)։

Սերինեն ունի նաև մի շարք անտիպ ստեղծա-գործություններ («Ուխտալեռան եղնիկ» պոեմը՝ արեմտահայության կյանքից, «Արճակի հրեղեն-ներ» լեզենդը, «Հայոց պատմություն» և «Վանի հիմնադրում» պատմական պոեմներն ըստ Մովսես

Խորենացու «Հայոց պատմության», «Խանձարուրից մինչ Ուխտալուս» անավարտ պոեմը՝ ղրված 1943 թ. ղոհված Սովետական Միության հերոս Հմայակ 'Կաղարյանի հիշատակին և այլ գործեր)։

Առանձնահատուկ տեղ է գրավում նրա «Իմ հրկրային ուղին» ծավալուն ինքնակենսագրական վեպը, ուր ներկայացված է արևմտահայության ոչ հեռավոր անցյալը՝ 'Լևուի երկրորդ դիրքը՝ «Փոխա-րինողները», նվիրված է Սովետական Հայաստանի վերակառուցման շրջանին, որը հեղինակի մահ-վան պատճառով անավարտ մնաց։

«Արճակ» աշխատության ստեղծմանը Սերի-նեն ձեռնամուխ եղավ հնադիտության և աղղա-յրության ինստիտուտի աշխատողների խորհրդով Ժողովրդական բառ ու բանի հանդես ունեցած մեծագույն ակնածանքի ու հնաաքրություն շնորհիվ, տարիներ շարունակ իր մեջ ամբարած դիտելիքները նա թղթին հանձնեց վեց -յոթ ամս-վա ընթացքում՝ առաջացած տառիքում։ Մինչև կյանքի վերջին օրը, 1971 թ. դեկտեմբերի 25-ը, Սերինեն Լրիտապարզական ավյունով ջակում, լրացնում, իմրադրում էր աշխատությունը։